

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.03.2016

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշվետվություն կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի մասին:  
Նախապաշտպանությունների ժամանակացույցի քննարկում:

*(Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան):*

2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպական  
աշխատանքների մասին հաշվետվություն:

*(Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան):*

**ԼՍԵՑԻՆ.**

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ զեկուցողը նշեց, որ կուրսային և ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2015-2016 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված կուրսային և ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաներ: Ամբիոնային նիստերում քննարկվել են թեմաները, կատարվել են ուղղումներ, շտկումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Ասվեց, որ կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները բավարարում են պահանջվող չափանիշները, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն: Շեշտադրվեց այն հանգամանքը, որ թեմաները արդիական են և կարևոր: Չեկուցողը նշեց նաև, որ սթ. ապրիլ ամսին նախատեսվում է անցկացնել հինգ մասնագիտությունների գծով ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Նշեց, որ պատրաստ է նախապաշտպանության ժամանակացույցը.

Պատմություն – 16.04.16թ.

Հայոց լեզու և գրակ. - 21.04.16թ.

Մանկ. և հոգեբ. - 22.04.16թ.

Անգլ. լեզու և գրակ. - 22.04.16թ.

Ֆրանս. լեզու և գրակ. - 22.04.16թ.

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝* Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ. Ա. Ներսիսյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

*ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:*

*ԼՍԵՑԻՆ.*

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ դեկանը հայտնեց, որ 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները անց են կացվում սահմանված ժամանակացույցով / մարտի 28-ից մինչև ապրիլի 9-ը /, սահմանված կարգի համաձայն: Ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը նախապես տրամադրվել են ուսանողներին: Կազմված թեստերը ստորագրվում են ամբիոնի վարիչի և կնքվում ֆակուլտետի դեկանի կողմից: Քննական գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով քննությունների արդյունքները փակցվում են ֆակուլտետների ցուցատախտակներին և տեղադրվում են մասնաճյուղի պաշտոնական կայքէջում:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝* Կ.Գ.Թ. Ս. Խաչատրյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ. Ա. Ներսիսյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Մարիաստյանը:

*ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2015-16 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. Խաչատրյան